

մական առթով մը գրուած են, աւելի քիչ չափով կը պարունակեն այդ թերութիւնները :

Եւրոմանեանը կը փափագէինք տեսնել խորհրդապաշտ, բայց իր գրական դպրոցի լաւ յատկութիւններով միայն օժտուած :

Պէտք է ըսել սակայն՝ որ իր նոր հաւաքածոյքի ամբողջութիւնը ինչ արատներ ալ ցոյց տալու ըլլալ մանրամասնութեանց մէջ, անոնք ամբողջութեան մէջ կ'աւրուին՝ վառվռուն զաղափարներու ցուլքերուն տակ, Եւրոմանեանի բանաստեղծութիւնը՝ նոյն իսկ այն աղամանդեայ աղբիւրն է՝ որ կը սահի հայ ազգին հոգւոյն աւերակներուն մէջէն, և որուն հայութիւնը ընդերկար ծարաւի պիտի զգայ զինքը :

ՄԵՆԱՍԻՐ

ԱՓ ՄԵ ՄՈՒՆԻ, ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ ...

Այնպիսի յիշատակիմ .

Ա.

Աւաղ, ապարանքի մը պէս մեծ էիր, և շքեղ, Ու ես երջենքներուդ ապկալի կատարէն, Աստղածորան գիշերներու յոյսին հետ, Վարէն, անգղաժող Եփրատին կ'ունէնդէն ...

Բ.

Արցունքով, արցունքով լսեցի որ աւերակ, աւերակ, Քու լայնանիստ պատեղը իբրեւ վրայ կործանեցին, Սարսափի օր մը, կոտորածի օր մը, օր մը արեւնի ... Ձեզ ձեզորդ պարտզդի ծաղկեցներուն վրայ :

Գ.

Ու մոխրացան այն սենեակը կապոյտ, Որուն որմերուն ետեւ և գորգերուն վրայ, Իմ երջանիկ մանկութիւնս կը հրճուէր, Եւ կեանքս կ'աճէր և հոգիս իր թևերը կ'առնէր ...

Դ.

Փրփրեցան, ուրեմն, այն հայիկէն ոսկեծիփ, Որուն եթերային խորութեանը մէջ, Եւրոպեան, յոյսերս, սէրերս և կամքս կարմիր, Տարիներով, մասնավոր հետ, ցուցին ...

Ե.

Ու բակին մէջ երգող աղբիւրը մոռնա, Ու կոտորեցան պարտեղիս ուռին և թթնին. Եւ այն առուակը որ ծառերուն մէջէն կը հոսէր, Յամբեցան, ըսէ՛, ո՛ր է, ցամբեցան, ցամբեցան ...

Զ.

Ո՛ր, այն վանդակին կ'երազեմ յաճախ, Որուն մէջ գորշադոյն կաքաւ, առաւօտուն, Արեւծագին հետ և վարդի թուփերուն դիմաց, Ջարձնումի ժամուս՝ յստակօրէն կը կարգէր ...

Է.

Հայրենի՛ տուն, հաւասար որ մաճկոյ յետոյ Քու աւերակներուդ սեւին վրայ, Իմ հոգիս, Պիտի գայ, որպէս տառաքի մը տարագիր, Իր գործարիւր երգը և արցունքը լալու ...


Ը.

Բայց ո՛վ պիտի բերէ, ո՛վ պիտի բերէ, ըսէ՛, Քու սրբազան մոխիրէդ ափ մը մոխիր, Մահուան օրը, Իմ տրտուծ դազադիս մէջ, Հայրենիքս երգողի իմ անձնին խառնելու ...

Թ.

Ափ մը մոխիր անձնին հետ, Հայրենի՛ տուն, Ափ մը մոխիր ցու մոխիրէդ, ո՛վ պիտի բերէ, Քու յիշատակէդ, քու ցաւէդ, քու անցեալէդ, Ափ մը մոխիր ... Իմ սրտիս վրան ցանկու ...

ԱՅՈՒ ԵՄԻՆԱՆԱՆ



ՍՊԱՆԱԿԱՆ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Քսաներորդ դարուն սկիզբը կարծես վայրկեան մ'արթնցաւ Սպանիան իւր քաղաքական, գաղթային, առեւտրական և ճարտարարուեստի թմրութենէն : Կարծես թէ նոր կեանքի շունչ մը կը փչէր, կը զարթուցանէր եռանդ մը՝ նորաստի ոյժ մը. յետոյ լոյսը անհետացաւ և ողջոյն երկիրը խորասուզուեցաւ քնոյ մէջ, Եւ սակայն բան մը մնաց, և իմացուեցաւ որ ցնցուած յօժարութիւններուն կը պակսէր առաջնորդ մը որ պիտի դուրս ելլէր աւանդութեան կապանքներէն և պիտի բանալար պատուահանները՝ դուրսէն եկած օդին :

Սպանիականութիւնը կորսնցուց այն առանձին յետին համախոհները, որոնք կը կարծէին թէ արուեստը և մտածութիւնը կրնային աճել անշարժ, և ուրիշ երկիրներու կեանքին հանդէպ փակուած մնալով. այն առանձինները դարձուցին իրենց